Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 259 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԼՍՈՂԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Սոցիալապես անապահով պայմաններում ապրող ընտանիքների՝ լսողական խնդիր ունեցող երեխաներին լսողական սարքերի նվիրաբերում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Հրանտ Վարդանյան փողոց 6, ՀՎՀՀ՝ 02269952)
4.	Ծրագիրը կատարողը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Հրանտ Վարդանյան փողոց 6, ՀՎՀՀ՝ 02269952)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ Հայաստանի Հանրապետության մարզեր և Երևան քաղաք, բնագավառը՝ առողջապահական
6.	Ծրագրի բյուջեն	144,000 եվրոյին համարժեք դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Ծրագրի շահառու են հանդիսանում Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում բնակվող սոցիալապես անապահով ընտանիքների լսողական խնդիր ունեցող 12 երեխա:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի ապրիլի 21-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 1-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել և ներմուծել 144,000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ լսողական սարքեր (12 հատ կոխլեար իմպլանտ 66,000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ և 12 հատ աուդիո պրոցեսոր 78,000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ) և նվիրաբերել սոցիալապես անապահով ընտանիքների լսողական խնդիր ունեցող երեխաներին. 2) միջոցառումը նախատեսվում է իրականացնել 2024 թվականի ապրիլի 21-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Լսողական սարքերի (12 հատ կոխլեար իմպլանտ և 12 հատ աուդիո պրոցեսոր) ձեռքբերում և ներմուծում՝ 144,000 եվրոյին համարժեք դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է համագործակցություն Միասնական սոցիալական ծառայության համապատասխան տարածքային կենտրոնների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	1) ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից. 2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով տեղեկությունների ներկայացում լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

17.04.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ